ՃԼԵՐՔԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Մի տղա ա ըլըմ, մի մեր ա ունենըմ։ Մերը հիվանդանըմ ա։
Տղեն ասըմ ա.— Ի՞նչ ես ուզըմ ուտես։
Դրանք էլ էրկու եզն են ունենըմ։
Մերն ասըմ ա.— Թե եզը կմորթես, միսը կուտեմ, թե չէ էլ զադ չեմ ուտիլ։
Ասըմ ա.— Բա չթի վախտն ի՞նչ կանենք։— Թե ասըմ ա,— Աստոծ ըղորմած ա։
Եզը մորթըմ ա, մորն ուտացնըմ։
Չթի վախտը գալիս ա, ասըմ ա.— Բա հմի ի՞նչ անեմ, նանի՛։
Թե ասըմ ա.— Չութը սարքե, քե մատաղ, ինձ կլձես։
Սարքըմ ա, մորը տանըմ ա լձըմ։
Վարն անելու վախտը թաքավորն ըտի ֆորս անելիս ա ըլըմ։
Մի դուշ ա սպանըմ, իրան նոքարին ասըմ ա.— Հենց խրովե, որ էրի ոչ։ Նոքարը խրովելիս տենըմ ա, որ տղեն մորը լձել ա։ Միսը մտահան ա անըմ, ուշկը նրանց վրա գձըմ, էրըմ ա։
Թաքավորն ասըմ ա.— Խի՞ ես էրել։
Ասըմ ա.— Թաքավորն ապրած կենա, հլա տես, տղեն մորը լձել ա, ուշկս դենն էր, էնա էրեցի։
Թաքավորն ասըմ ա.— Գնացեք էն տղին կանչեցեք։
Կանչըմ են, գալիս ա կուշտը, ասըմ ա.— Ըմանչում չե՞ս, խի՞ ես քու մորը լձել։
Ասըմ ա.— Թաքավորն ապրած կենա, երկու եզն ունեինք, մերս հիվնդացավ, ասավ.— Մինը մորթե։ Ես էլ խաթրիցն էլա ոչ, մորթեցի՝ կերավ, հմի տեհա որ ձմեռը սովիլ տինք, հարգն էլ մի կռնից կարալ չտենք տալ, էնա ինքն ասավ,— ինձ լձե, ես էլ լձեցի։
Թաքավորն ասըմ ա.— Ամոթ ա, ամոթ, մորդ վեր թող, ես մի խամ բուղա ունիմ, թե կարաս սովորեցնես, արի տար լձե։ Տղին հետը տանըմ ա, տենըմ ա՝ ինչ բուղա, մի ըզազիլ բան ա։ Դու մի ասիլ թաքավորը կարենալիս չի ըլում սովորեցնե։
Աղալ են անըմ ու բռնըմ։ Տղեն բերըմ ա տուն, գոմըմը քիփլիկ կապըմ, փորիցն էլ, պոզերիցն էլ կապըմ ա իրեք օր, իրեք քշեր սոված պահըմ ա։ Բուղեն հնգլ-հնգլ ա ընգնըմ։ Եդնա բերըմ ա մի թաս ջուր ա տալի, մի բուռը խոտ ու էն հալին բերըմ ա եզան հետ լձըմ։ Քիչ-քիչ ջուրն էլա շտացնըմ, խոտն էլ, բուղեն սվորըմ ա, կուղը վրեն ա դնըմ ու դոշերը սևացնըմ ա։
Թաքավորն ասըմ ա.— Հլա էն տղին կանչեցեք գա ըստի։
Կանչըմ են, ասըմ ա.— Էդ ո՞նց արիր, որ սովրցըրիր։
Թե.— Դե, էնա սովրցրի էլի։
Դե,— ասըմ ա,— մի ախչիկ ունիմ, արի քի տամ իմ չխարովն էլ հրսանիք կլիս, տար քի կնիկ։
Տղեն գալիս է մորն ասըմ, թե.— Գնա թաքավորի աղջիկն ինձ համար ուզի։
Մերն ասըմ ա.— Վո՛ւյ, մենք քյասիբ ենք, թաքավորը մեզ ախչիկ չի տալ։
Ասըմ ա.— Կտա՛։
Ասըմ ա.— Էս պտռատորված շորերով ես գնալ չեմ թաքավորից ախչիկ ուզիլ։
Էնա տղեն մոր համար շորեր ա առնըմ, զուքըմ ա, ըղու ա անըմ։ Մերը գնըմ ա, ըմանչըմ ա տուն մտնի, դռանը նստըմ ա։
Գնըմ են թաքավորին ասըմ, թե.— Մի պառավ ա էկել, դռանը նստել։
Ասըմ ա.— Կանչեցեք։
Տուն ա գնըմ, ասըմ ա.— Թաքավորն ապրած կենա, մի բան տիմ ասիլ, հմա ըմանչըմ եմ, թե ասեմ։

Թաքավորն ասըմ ա.— Ըմանչիլ մի, ասա՛։
Ասըմ ա. —Թաքավորն ապրած կենա, իմ տղեն քու ախչիկն ուզըմ ա։
Թե ասըմ ա.— Շատ էլ լավ ա անըմ, ո՛ր օրն ուզըմ ա, թող գա տանի։
Գնըմ են ախչիկը բերըմ, ճլերք ա ըլըմ, գեդնիցը կպչըմ ա, մնըմ։
Մերը տղին ասըմ ա.— Էս ի՞նչ ա, որ բերիր։
Տղեն թե.— Բան չկա, ես դրան ճամփու կբերեմ, կհայացնեմ.
Մորն ասըմ ա.— Դրան հաց ու ջուր չտաս։ Եդո ասըմ ա.— Բանն ո՞վ անի, ասըմ ա.— Ես ու դու, թե բա.— Հացն ո՞վ ուտի, թե.— Ես ու դուն։
Իրանք ուտըմ են, նրան տալիս չեն։ Մի օր, էրկու օր, տհենց կենըմ ա, մի օր էլ էդ ճլերքը վի ա կենըմ, իրան տակն ու ղրաղնին ավլըմ ա, եդ նստըմ։
Ըրիգունը մերը տղին ասըմ ա.— Դե դրան մի կտոր հաց տու, մի քիչ էլ ջուր տու։
Տալիս ա, ուտըմ ա։ Էգսի օրը ախչիկը վի ա կենըմ, տան կեսն ավլըմ ա, եդ նստըմ ա։
Պառավը տղին ասըմ ա։
Տղեն ասըմ ա.— Դե մի հացի կեսը տու, մին էլ կես ստաքան ջուր տու։
Ախչիկն ասըմ ա.— Վո՛ւյ, գրողը տանի սրանց, իմ հոր տանն անբան շինիլ ամեն բան էլ ուտեի, սրանց տանը չկելը բան չեմ շինըմ, ցամաք հաց էլ չեն տալիս։
Եդի օրը վի ա կենըմ, տունն էլ ա ավլըմ, դուռն էլ։ Մերն ուրախանալով տղի անգաճը բռնըմ ա։
Տղեն ասըմ ա.— Դե հմի մեզ հետ բարեբար հաց կտաս։
Դրանից եդը ախչիկը վեր ա կենըմ, տուն ու դուռը թամըզըմ, ջուրն ա գնըմ, տան բանն անըմ ա, ղոչաղանըմ ու շփշփըմ ա։
Օրի մի օրը թաքավորն ասըմ ա.— Էն ճլերքին տվինք էն նաչար տղին, հլա գնանք տենանք ի՞նչ դառավ։
Մի լավ խուրջին ա սարքըմ (թաքավորն ունի ո՞չ), գնըմ ա տեսութին։ Ախչիկը շփշփալեն գալիս ա հոր ձիու գլուխը բռնըմ, ուրխանալով հորը վեր ա բերըմ, տուն տանըմ։ Կեսուրը տանըմ ա ձին հորըքելու։ Դրանք միս են ըլըմ Էփած։
Ախչիկը բերըմ ա սխտորը տալի հորը, ասըմ ա.— Կլպե՛, որ ըրիգունը քի հաց տան, թե չէ սրանք քի հաց չեն տալ։
Թաքավորը բեխի տակին ծիծաղըմ ա, կամանց-կամանց կլպըմ ա։
Կեսուրը եդ ա գալի, տենըմ ա թաքավորը սխտոր ա կլպըմ, ասըմ ա.— Վո՛ւյ, քոռանամ ես, ախչի էդ խի՞ ես սխտորը խնամուն տվել, որ կլպի։
Էնա հարսն ընդիան վեր ա ունըմ թե.— Բա չկելը բան չշինե, դուք հաց կտա՞ք, ինձ տեի՞ք։
Կեսուրն էն ա խնամու ըղաքիցը վեր ա ունըմ, ինքն ա կլպըմ։
Ըրիգունը տղեն էլ գալիս ա, մի լավ քեփ ա սարքըմ, ըռավոդը թաքավորն ուրխանալով գնըմ ա իրան կնգանն ասըմ.— Աչկդ լիս, մեր ախչիկն էլ էն չի։
Մերն էլ ա ուրխանըմ, գալիս են, նոր տանըմ իրանց տուն, թազա քեփ անըմ։ Դուն էլ ուրխանաս, քու մուրազին հասնիս։